ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՏԻԿԻՆ Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

**Հարգելի տիկին Առաքելյան.**

Ի պատասխան Ձեր 04.12.2018թ. 01/18Մ գրության՝ տեղեկացվում է.

Հանրապետության հրապարակում տեղադրելու նպատակով տոնածառի ձեռքբերման ֆինանսավորումն իրականացվել է համապատասխան ստորաբաժանումների կողմից ներկայացված եզրակացությունների և ֆինանսավորման համար անհրաժեշտ այլ համապատասխան փաստաթղթերի հիման վրա:

Մասնավորապես.

2005 թվականից ի վեր, առաջին անգամ Հանրապետության հրապարակում տեղադրվում է նոր տոնածառ, որը ըստ էության, ոչ միայն Երևանի, այլև Հայաստանի գլխավոր տոնածառն է: Տոնածառի գնման համար տրամադրված գումարը, ի դեպ, «Էրեբունի-Երևան» տոնակատարության համար նախատեսված ծախսերից խնայած միջոցների մի փոքր մասն է կազմում: Ձեր ուշադրությունն եք հրավիրում նաև այն փաստի վրա, որ նախկինում տեղադրվող տոնածառի մետաղյա կոնստրուկցիան ֆիզիկապես մաշված էր և կարող էր խնդիրներ առաջացնել անվտանգության տեսանկյունից, բացի դրանից, ձեռքբերված տոնածառն օգտագործվելու է առաջիկա մի քանի տարիներին: Նոր տոնածառ ունենալու անհրաժեշտությունը բխում է նաև քաղաքի բնակիչների ցանկությունից, հետևաբար՝ նոր տոնածառի ձեռքբերումն անհրաժեշտություն էր: Ինչ վերաբերում է տվյալ ընկերությունից տոնածառի ձեռքբերման ընտրությանը, տեղեկացվում է, որ Հանրապետության հրապարակի չափսերին համարժեք արհեստական տոնածառ Հայաստանի Հանրապետությունում չի արտադրվում: Ընտրությունը կատարվել է մի քանի արտասահմանյան ընկերությունների առաջարկներից: Տոնածառը, ներառյալ՝ մետաղական կոնստրուկցիան, արհեստական եղևնու ճյուղերը, լուսադիոդային շղթաները, շուրջ 1500 խաղալիքները, դրանց տեղափոխումը Հայաստանի Հանրապետություն արժեցել են 68 մլն 912 հազար ՀՀ դրամ, ևս 1 մլն 898 հազար ՀՀ դրամ կազմել են եղևնու տեղադրման ծախսերը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ